



*Գործարար շահերի պաշտպանության ցանցի կազմակերպած կլոր-սեղանի
քննարկումները մարզերում*

Ս.թ. հուլիս-սեպտեմբեր ամիսներին Գործարար շահերի պաշտպանության ցանցը կազմակերպեց կլոր-սեղանի քննարկումների շարք ՀՀ մարզերում: Քննարկումների նպատակն էր բացահայտել մարզերում գործարար համայնքի համար խնդրահարույց հարցերը, որը հնարավորություն կտա հաշվի առնել դրանք Ազգային գործարար օրակարգի /ԱԳՕ/ ձևավորման գործընթացի ընթացքում:

Առաջին քննարկումները տեղի ունեցան Չարենցավան /Կոտայքի մարզ/ և Վայք /Վայոց Ձորի մարզ/ քաղաքներում: Քննարկումներն անցան արդյունավետ աշխատանքային մթնոլորտում: Վայք քաղաքում կայացած միջոցառմանը մասնակցեց նաև Մասնավոր ձեռնարկատիրության միջազգային կենտրոնի խորհրդատու Կ. Ստանիլան, որը մասնակիցներին հանգամանորեն ներկայացրեց Ազգային գործարար օրակարգի մեթոդաբանությունն ու դրա իրականացման միջազգային փորձը տարբեր երկրներում:

Քննարկումների ընթացքում ԳՇՊՑ-ի ներկայացուցիչները մասնակիցների ներկայացրեցին վերջերս ցանցի կողմից իրականացված հարցման արդյունքների հիման վրա ձևավորված ձեռնարկատիրությանը խոչընդոտող հիմնական հարցերի ցանկը, որի շուրջ էլ ծավալվեց բուռն քննարկումներ: Քննարկումների ընթացքում ՓՄՁ ներկայացուցիչները բրձրաձայնեցին իրենց տեսակետները ներկայացված հարցերի վերաբերյալ և առաջարկեցին համապատասխան լուծումներ: Քննարկումների արդյունքում ձևավորվեց գործարար համայնքի ներկայացուցիչների կողմից բարձրացված հարցերի փաթեթ, որը հետագայում կվերլուծվի ԳՇՊՑ-ի կողմից և հաշվի կառնվի ԱԳՕ-ի մշակման գործընթացի շրջանակներում:

Օգոստոս-սեպտեմբեր ամիսների ընթացքում Գործարար շահերի պաշտպանության ցանցը շարունակեց կյոր-սեղանի քննարկումները հանրապետության այլ մարզերում: ԳՇՊՑ-ն միջոցառումներ կազմակերպեց Իջևան, Վանաձոր և Գյումրի քաղաքներում:

Միևնույն ձևաչափով, ինչպես և նախորդ քննարկումներում՝ ԳՇՊՑ-ի ներկայացուցիչները կյոր-սեղանի մասնակիցներին ներկայացրեցին ցանցի կողմից իրականացված հարցման արդյունքների հիման վրա ձևավորված ձեռնարկատիրությանը խոչընդոտող հիմնական հարցերի ցանկը, որի շուրջ էլ ծավալվեցին քննարկումները: Քննարկումների ընթացքում ՓՄՁ ներկայացուցիչները բարձրաձայնեցին իրենց տեսակետները ներկայացված հարցերի վերաբերյալ և առաջարկեցին համապատասխան լուծումներ:



Կյոր-սեղանի քննարկումների Կոտայքի մարզում



Կյոր-սեղանի քննարկումների Վայոց Ձորի մարզում



Կողմ-սեղանի քննարկումների Տավուշի մարզում



Կողմ-սեղանի քննարկումների Լոռու մարզում



Կողմ-սեղանի քննարկումների Ծիրակի մարզում